թուի 'ի կարգս Կայսերաց. վասն զի 'ի Դապէն ոչ թագաւորեցաւ: Սորին Մէղինէ Մէնտուլռուզ գնայր գաղտ 'ի գիշերի 'ի մորին, և բարձեալ շալկաւն փայտ՝ բերեալ դնէր 'ի դրունս աղքատաց: Իւր ձեռամբ ժողովէր հաւկ՝ ծեծէր և աղայր, և առնէր նշխարս և բաժանէր յեկեղեցիս վասն պատարագաց:

Գրնկարիս երրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Խ. Ֆոլիգոս յԱլամանիայ, և սա ես յԻտալիայ. վասն այն 'ի թուականս ոչ համարի: Գրնկարիս ինքնակալեաց ամս Ը: Սա 'ի հասակի երիտասարդութեան՝ ոչ հաւատայ զհացն լինել մարմին Քրիստոսի, բայց յետոյ հաւատաց:

Գրնկարիս չորրորդ՝ սկսաւ յամի Տեառն Ջ.ԽԸ. ինքնակալեալ ամս ԺԸ: Էր սա զազանաբարոյ և լիզող երկրի: Սա զկինն Լօթէր՝ որ 'ի բաց թողեալ էր՝ եդ 'ի բանտի. և թագաւորն Ալամանաց

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան